

Յիսուս Քրիստոսի Սուրբ Աւետարանին Մարկոսի Համաձայն

Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Յարութեան Մասին

Կիրակի առաւօտ կանուխ, արեւածագին, գերեզման եկան:

- Ո՞վ պիտի գլորէ գերեզմանի մուտքին դրուած քարը- կը հարցնէին իրարու, որովհետեւ քարը շատ մեծ էր:

Սակայն երբ նայեցան, տեսան որ քարը արդէն իսկ գլորուած էր: Գերեզմանէն ներս մտան եւ ներմակ զգեստ հագած երիտասարդ մը տեսան, որ աջ կողմը նստած էր, եւ սարսափեցան:

Երիտասարդը ըսաւ անոնց. —Մի՛ վախնա՛ք, գիտե՛մ որ խաչուած Նազովրեցի Յիսուսը կը փնտո՞ւէք, բայց հոս չէ՛, յարութիւն առաւ: Տեսէ՛ք զինք հոս դրած էին: Այժմ գացէ՛ք, ըսէ՛ք իր աշակերտներուն եւ Պետրոսի, որ ահա ինք ձեզմէ առաջ կ'երթայ Գալիլեա. հո՛ն պիտի տեսնէ՛ք զինք, ինչպէս որ ըսած էր ձեզի:

Երբ ասիկա լսեցին, դուրս փախան գերեզմանէն, զարհուրած ու ապշահար, եւ ոչ մէկուն բան մը ըսին, որովհետեւ կը վախնային:

Easter Sunday

Ալէլուիա. ալէլուիա: Ընթերցում Առաքեալներու Գործոց Գիրքէն

Առաջին գիրքիս մէջ, ո՛վ Թեոփիլոս, գրեցի այն բոլորին մասին, որ Յիսուս կատարեց եւ սորվեցուց սկիզբէն մինչեւ այն օրը, երբ Սուրբ Հոգիին զօրութեամբ իր պատուէրները տալէ ետք իր ընտրած առաքեալներուն, երկինք համբարձաւ: Իր չարչարաններուն յաջորդող քառասուն օրերուն ընթացքին ան քանիցս երեւցաւ անոնց, բազմաթիւ կերպերով ցոյց տալով՝ թէ ինք այլեւ ողջ է, եւ իստեցաւ Աստուծոյ արքայութեան մասին: Եւ առիթով մը, երբ անոնց հետ միասին հաց կ'ուտէր, անոնց պատուիրեց. –Երուսաղէմէն մի՛ հեռանա՛ք, սպասեցէ՛ք՝ մինչեւ ստանա՛ք Հօրը խոստումը, որուն մասին իստեցայ ձեզի: Յովհաննէս ջուրով մկրտեց, բայց դուք Սուրբ Հոգիով պիտի մկրտուի՛ք մօտ ատենէն:

Ուրիշ անգամ մը, երբ դարձեալ հաւաքուած էին, առաքեալները հարցուցին անոր. –Տէ՛ր, արդեօք հիմա՞ է ժամանակը երբ պիտի վերականգնես Իսրայէլի թագաւորութիւնը:

Յիսուս պատասխանեց. –Դուք չէ՛ք կրնար գիտնալ ժամերն եւ ժամանակները, որ Հայրը իր իշխանութեամբ որոշած է: Բայց երբ Սուրբ Հոգին իջնէ ձեր վրայ, զօրութեամբ պիտի լեցուի՛ք եւ իմ վկաներս պիտի ըլլա՛ք՝ Երուսաղէմի, ամբողջ Հրէաստանի եւ Սամարայի մէջ, եւ մինչեւ աշխարհի ծայրամասերը:

Այս իստեքէն ետք, մինչ անոր կը նայէին, Յիսուս երկինք համբարձաւ, եւ ամպ կը մը ծածկեց զինք անոնց տեսողութենէն: Եւ երբ տակաւին առաքեալները իրենց աչքերը երկինք յառած՝ Յիսուսի մեկնիլը կը դիտէին, ահա երկու սպիտակազգեստ մարդիկ երեւցան անոնց եւ ըսին. –Ո՛վ Գալիլեացիներ, ինչո՞ւ կեցեր երկինքը կը դիտէ՛ք: Այս Յիսուսը որ երկինք համբարձաւ, օր մը դարձեալ պիտի գայ այնպէս՝ ինչպէս անոր երկինք երթալը տեսա՛ք:

Ապա առաքեալները Զիթենեաց լեռնէն վերադարձան Երուսաղէմ, որ լեռնէն հագիւ մէկ ֆիլումբօր հեռաւորութիւն ունի: Եկան քաղաք եւ գացին այն վերնատունը ուր կը մնային: Ասոնք էին՝ Պետրոս եւ Յակոբոս, Յովհաննէս եւ Անդրէաս, Փիլիպպոս եւ Թովմաս, Բարթողոմէոս եւ Մատթէոս, Ալփէոսի որդին՝ Յակոբոս եւ Շմաւոն Նախանձախոյզ, եւ Յակոբոսի որդին՝ Յուդա: Բոլորը միասնաբար յարատեւ աղօթքով կ'անցընէին օրերը, շատ մը կիներու, Յիսուսի մօր՝ Մարիամի եւ Յիսուսի եղբայրներուն հետ միասին: